ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

9 օգոստոսի 2021 թվականի N 232

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ԻՋԵՎԱՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ-Ի ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, <<Ն.ՆԱՍԻԲՅԱՆԻ ԱՎԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ-Ի ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի ԹԻՎ 43-Ա ՈՐՈՇՄԱՆ 2-ՐԴ ԵՎ 3-ՐԴ ԿԵՏԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ և 37-րդ հոդվածներով և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 24-րդ և 25-րդ կետերով

Որոշում եմ

1. Հաստատել ՀՀ Տավուշի մարզպետարանի ենթակայության «Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի նախահաշիվը և հաստիքացուցակը՝ համաձայն թիվ 1 և թիվ 2 հավելվածների:
2. Հաստատել ՀՀ Տավուշի մարզպետարանի ենթակայության «Ն.Նասիբյանի անվան Նոյեմբերյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի նախահաշիվը՝ համաձայն թիվ 3 հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Տավուշի մարզպետի 2021թ. փետրվարի 17-ի թիվ 43-Ա որոշման 2-րդ և 3-րդ կետերը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է 2021թ. օգոստոսի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

ՄԱՐԶՊԵՏ

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

10.08.2021

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

9 օգոստոսի 2021թ.
Ք. Իջևան